

«Լավագույն կին-գործարար»

ՀՀ վարչապետի մրցանակաբաշխության հայեցակարգը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2010 թվականի փետրվարի 11-ի N5 արձանագրային որոշմամբ հավանության արժանացրեց «Գենդերային քաղաքականության հայեցակարգը», հաստատելով իր հավատարմությունը գենդերային հավասարության գաղափարախոսությանը: Վերջինը ենթադրում է հավասար պայմանների և հավասար հնարավորությունների ստեղծում կանանց և տղամարդկանց անհատական ներուժի դրսևորման համար՝ ի նպաստ երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացմանը:

Հաշվի առնելով վիճակագրական տվյալները, որոնք փաստում են տնտեսության մեջ կին-գործատուների թվի գրեթե 8 անգամ զիջումը տղամարդ-գործատուների թվին (2010թ-ին հարաբերակցությունը 100-ի մեջ կազմել է 12/88), Հայաստանի Հանրապետության վարչապետին կից Կանանց խորհուրդն առաջարկեց խրախուսել և հանրահռչակել գործարար կանանց: Ի կատարումն 2011 թվականի նոյեմբերի 25-ին ՀՀ վարչապետի մոտ կայացած նիստի N 14.8/[97580]-11 արձանագրության հանձնարարականի ստորև ներկայացվում է «Լավագույն կին-գործարար» ՀՀ վարչապետի մրցանակաբաշխության հայեցակարգը:

I. Մրցանակաբաշխությունների էությունը

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման բնագավառում կանանց ձեռնարկատիրական նախաձեռնողականության խրախուսման, տնտեսության տարբեր ճյուղերում կին-գործարարների նվաճումների ըստ արժանավույն գնահատման, հանրահռչակման և սատարման նպատակով ***Հայաստանի Հանրապետության վարչապետը հայտարարում է մրցանակաբաշխություն հետևյալ 4 ուղղություններով.***

1. «Լավագույն կին-գործատու» - այս մրցանակաբաշխությանը կարող են մասնակցել միայն ՀՀ մարզերում (այսինքն՝ բացի քաղաք Երևանից) ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կանայք (սեփականության իրավունքով 50 տոկոս և ավելի բաժնեմաս ունենալու պարագայում): Մրցույթի հիմնական չափորոշիչներն են.

ա. աշխատատեղերի քանակը

- բ. աշխատողների ընդհանուր թվում կանանց բաժինը (%-ով)
- գ. աշխատողների (բացառությամբ տնօրենի և փոխտնօրենների) միջին աշխատավարձը
- դ. թողարկված արտադրանքի ծավալը վերջին 3 տարում

2. «**Լավագույն կին-նախաձեռնող**» - այս մրցանակաբաշխությանը կարող են մասնակցել ՀՀ մարզերում և քաղաք Երևանում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող այն կանայք (սեփականության իրավունքով 50 տոկոս և ավելի բաժնեմաս ունենալու պարագայում), որոնք նախաձեռնել և գրանցել են իրենց բիզնեսը 2010 թվականի հուլիսի 1-ին և դրանից հետո ընկած ժամանակահատվածում: Մրցույթի հիմնական չափորոշիչներն են.

- ա. տնտեսության ճյուղը
- բ. կատարված ներդրումների ծավալը
- գ. աշխատատեղերի քանակը
- դ. առաջին անգամ սեփական գործ հիմնելու հանգամանքը

3. «**Մարզի կին-բարեգործը**» - այս մրցանակաբաշխությանը կարող են մասնակցել միայն ՀՀ մարզերում (այսինքն՝ բացի քաղաք Երևանից) ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կանայք (սեփականության իրավունքով 50 տոկոս և ավելի բաժնեմաս ունենալու պարագայում): Մրցույթի հիմնական չափորոշիչներն են.

- ա. բարեգործությանն ուղղված գումարը վերջին 3 տարում (%-ով գուտ եկամտի ընդամենը գումարի նկատմամբ)
- բ. բարեգործության հիմնական ուղղվածությունը՝ շահառուները և/կամ ստացող կազմակերպությունները
- գ. պետական սոցիալական՝ ներառյալ առողջապահական, կրթական, մշակութային և այլ ծրագրերին մասնակցությունը
- դ. շրջապատի և/կամ համայնքի տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացումը

4. «**Կին-արտադրողի լավագույն ապրանքանիշը**» - այս մրցանակաբաշխությանը կարող են մասնակցել ՀՀ մարզերում և քաղաք Երևանում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կանայք (սեփականության իրավունքով 50 տոկոս և ավելի բաժնեմաս ունենալու պարագայում): Մրցույթի հիմնական չափորոշիչներն են.

- ա. ապրանքանիշի անվանումը
- բ. ապրանքանիշը կրող արտադրատեսակների անվանացանկը

- գ. ապրանքանիշի ներկայացվածությունը հանրապետության առևտրական ցանցերում (նաև արտասահմանում)
- դ. ապրանքանիշը կրող ֆիրմային խանութի առկայությունը

II. Մրցանակաբաշխությունների կազմակերպումը

Մրցանակաբաշխության մասին հայտարարությունը հրապարակվում է Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի (ՓՄՁ ՋԱԿ) կայք էջում՝ <http://www.smednc.am> 2012 թվականի մարտի 1-ին: Հայտարարությանը կից տեղադրվում է նաև յուրաքանչյուր մրցանակաբաշխության համար նախատեսված հայտի ձևը, որը պետք է լրացվի հայտատուի կողմից և ներկայացվի առցանց կամ ՓՄՁ ՋԱԿ-ի մարզային գրասենյակ մինչև 2012 թվականի մարտի 25-ը:

Մրցանակաբաշխության կազմակերպման կարևոր սկզբունքներն են՝

- ա. յուրաքանչյուր հայտատու կարող է մասնակցել միայն մեկ մրցանակաբաշխության՝ իր ընտրությամբ
- բ. յուրաքանչյուր մրցանակաբաշխության համար նախատեսվում է եքեք մրցանակ՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերի համար
- գ. հայտատուների ընտրությունը կատարում է մրցութային հանձնաժողովը, որը ստեղծվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ

Մրցույթի անցկացման ու հայտերի գնահատման կարգը մշակում է ՓՄՁ ՋԱԿ-ը և ներկայացնում մրցութային հանձնաժողովի հաստատմանը: Մրցութային հանձնաժողովը, ուղղորդվելով իր կողմից հաստատված կարգով, ուսումնասիրում ու գնահատում է հայտերը և արդյունքների հիման վրա առաջարկություն է ներկայացնում ՀՀ վարչապետին: Մրցանակների շնորհման արարողությունը կատարվում է ՀՀ վարչապետի մոտ՝ 2012 թվականի ապրիլի 5-ին:

III. Մրցանակների տեսակները

Մրցանակի հիմնական տեսակը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի պատվոգիրն է: Առաջին տեղի համար շնորհվող պատվոգիրը՝ ճիրանագույն հենքի վրա է պատրաստվում, 2-րդ տեղինը՝ կապույտ, իսկ 3-րդ տեղինը՝ կարմիր: Ընդհանուր առամամբ շնորհվելու են 12 (4x3) պատվոգրեր:

Մրցույթի հաղթողների գործունեությունը լուսաբանվում է ՓՄՁ ԶԱԿ-ի «ՓՄՁ լրատու» հաղորդաշարի ընթացքում: Բոլոր 12 հաղթողները կարող են օգտվել ՓՄՁ ԶԱԿ-ի ուսուցողական և խորհրդատվական ծրագրերում, որոնց մասնակցության ողջ գումարը կփոխհատուցի ՓՄՁ ԶԱԿ-ը:

Մրցույթի հաղթողների ձեռնարկատիրական գործունեությունը ներկայացվում է հասարակության լայն շրջանակներին հետևյալ միջոցներով՝

- ամսագրերից մեկում (համաձայնեցվում է) «Մեր մարզերի գործարար կանայք» հոդվածաշարի ներդրում
- «Հրապարակում» հեռուստածրագրում մրցանակիրների հետ հարցազրույցների կազմակերպում
- հասարակական և միջազգային կազմակերպությունների կողմից փորձի փոխանակման հանդիպումների, սեմինարների, ուսուցողական ծրագրերի, ցուցահանդես-սուսադրումների և այլ միջոցառումների կազմակերպում:

Մրցանակակիրներին կարող են նաև նվերներ տրամադրել (կամ այլ ձևով խրախուսել) հասարակական և միջազգային կառույցները՝ իրենց կողմից իրականացվող գենդերային ծրագրերի շրջանակում (տարվում են բանակցություններ **UNDP, EBRD, OBCE, Oxfam, «Գործարար կանանց աջակցման հիմնադրամ»** և մի շարք այլ կազմակերպությունների հետ):

IV. ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի դերը

2012 թվականի փետրվարի 29-ին կազմակերպվում է Կանանց խորհրդի նիստ, որտեղ ՀՀ վարչապետը պաշտոնապես հայտարարում է մրցույթի մեկնարկը և պայմանները: Մինչ այդ, ՓՄՁ ԶԱԿ-ն արդեն նախապատրաստում է հայտի ձևերը, մրցութային պայմանները և այդ օրը տեղադրում է իր կայքէջում:

Զուգահեռաբար, ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչությունը նախապատրաստում է ՀՀ վարչապետի որոշման նախագիծ՝ **մրցութային հանձնաժողովի** ստեղծման և վերջինիս կազմի վերաբերյալ, որը քննարկման է դրվում Կանանց խորհրդի 29.02.2012թ.-ի նիստում, համաձայնեցվում է և 3 օրվա ընթացքում (եթե կարիք լինի լրամշակման) ներկայացվում է ՀՀ վարչապետի ստորագրմանը: